

**ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՐՈՄԵՏԻ 2017**  
**ՀՐԱՀԱՆՔՆԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Նախքան դաշտային աշխատանքների սկսվելը յուրաքանչյուր հարցազրուցավար խմբավարներից կատանա մեկնարկային կետերի հասցեներով ընթանքային միավորների ցուցակը: Հարցազրուցավարները կատանան նաև քայլի չափը և առաջին ընտրված տնային տնտեսության համարը, որից նրանք պետք է սկսեն հաշվել տնային տնտեսությունները: Բոլոր դեպքերում, մեկնարկային կետը շինությունն է, որտեղ ընտրական տեղամասը տեղակայված էր վերջին ընտրությունների ժամանակ:

Տնային տնտեսությունների հետ բոլոր շփումները, այդ թվում կայացած հարցումը և մերժումը փաստագրվում են գրուցավարի կողմից: Մշտապես փաստագրեք յուրաքանչյուր տնային տնտեսության հետ ամեն մի շփման արդյունքը, ամսաթիվը և ժամը: Խնդրում ենք հիշել, որ դուք չեք կարող այս հարցման մեջ փոխարինել ընտրված տնային տնտեսությունը, այդ պատճառով, ամեն մի տնային տնտեսություն այցելությունների արդյունքները պետք է փաստագրվի: Տնային տնտեսության անդամի և ընտրված հարցվողի հետ ամեն մի շփման ժամանակ խնդրում ենք ընդգծել, որ այս հարցումը անցկացվում է անկախ և ոչ պետական կազմակերպության կողմից՝ միայն գիտական նպատակներով: Այն չի ֆինանսավորվում կառավարության կամ որևիցե քաղաքական կուսակցության կողմից, և յուրաքանչյուր հարցվողի գաղտնիությունը պաշտպանված է:


**Արձանագրություն պատահական քայլի վերաբերյալ**

**Քայլի չափ:** Բոլոր ընտրատեղամասերի քայլի չափը 7 է:

**Մեկնարկային տնային տնտեսության համարը:** Հարցազրուցավարներին տրամադրվում է յուրաքանչյուր ընտրատեղամասի մեկնարկային տնային տնտեսության համարը: Օրինակ, տրված է, որ 101005 քլաստերի 7 քայլի չափը պետք է սկսել թիվ 3-րդ տնային տնտեսությունից: Սա նշանակում է, որ հարցազրուցավարն ընտրում է նախ իր ճանապարհին հանդիպած 3-րդ տնային տնտեսությունը, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր յոթերորդ տնային տնտեսությունը:

**Նպատակային բնակարաններ:** Հաշվարկի մեջ չպետք է ներառել այն շենքերը, որոնք որպես կացարան չեն օգտագործվում: Սա նշանակում է, որ այնպիսի շենքեր, ինչպիսիք են խանութները, դպրոցները և հիվանդանոցները, չպետք է ներառել տնային տնտեսությունների վերաբերյալ հարցազրուցավարի հաշվարկի մեջ: Չբնակեցված բնակարանները նույնպես պետք է դուրս մնան տնային տնտեսությունների հաշվարկից:

- Այն շենքերի դեպքում, որոնց առաջին հարկերն օգտագործվում են գործարար նպատակներով, իսկ վերևի հարկերը բնակելի են՝ գործարար նպատակներով օգտագործվող բնակարանները պարզապես պետք է բաց թողնել նույն ձևով, ինչպես չբնակեցված բնակարանների պարագայում: Ոչ թե ամբողջ շենքը պետք է բաց թողնել, այլ միայն գործարար մասերը:
- Եթե բնակելի տներով/շենքերով փողոցի երկայնքով տեղակայված ավտոտնակներ կան, ապա այդ ավտոտնակները պետք է անտեսել և հաշվի առնել միայն բնակելի տները/շենքերը:
- Եթե ոչ-բնակելի շենքերը բնակեցված են փախստականներով կամ այլ վարձակալներով, ապա այդ շենքերը պետք է համարել բնակելի:
- Եթե հարցազրուցավարը շրջապատույտ է կատարում և անցնում է այն կացարանների կողքով, որոնք ինքն արդեն հաշվառել է, ապա այդ կացարանները չպետք է նորից հաշվառվեն (տես՝ գծապատկեր 1):



Գծապատկեր 1.

Վերևի օրինակում հարցազրուցավարը սկսել է շարժվել շրջանակի մեջ առնված շենքի մոտ: Նա կատարել է աջ շրջադարձեր այնքան ժամանակ, մինչև նորից հասել է մեկնարկային կետին: Մեկնարկային կետում նա շարժվել է ուղիղ դեպի առաջ (գծագրում ցույց է տրված կետագծերով): Դրանից հետո նա


շարունակել է կատարել աջ շրջադարձեր, մինչև հասել է այն տեղը, որտեղ արդեն եղել է: Այնուհետև նորից ուղիղ է գնացել (ցույց է տրված հոծ գծով) և այլն:

**Մեկնարկային կետ:** Մեկնարկային կետը պետք է համարել վերջին ընտրությունների ժամանակ որպես ընտրատեղամասային կենտրոն օգտագործված շենքի պաշտոնական գլխավոր մուտքը:

**Քայլի հիմունքները:** Հարցազրուցավարները և խմբավարները նախապես միասին պետք է այցելեն ընտրատեղամասերը, քայլեն և որոշեն առաջին մի քանի տները: Խնդրահարույց վայրերում կամ գյուղերում հարցազրուցավարները պետք է կազմեն իրենց երթուղու քարտեզները, որոնք խմբավարներին կօգնեն ստուգումներ անցկացնելու:


- Հարցազրուցավարը քայլը սկսում է՝ մեջքով կանգնելով դեպի ընտրատեղամասային կենտրոնի շենքի պաշտոնական գլխավոր մուտքը: Նա շրջվում է դեպի աջ և սկսում քայլել և հաշվել այդ ուղղությամբ եղած տնային տնտեսությունները:
- Ամեն անգամ աջ շրջադարձ տեսնելով՝ հարցազրուցավարը պետք է շրջվի դեպի աջ:
- Եթե հարցազրուցավարը վերադառնում է այն կետին, որտեղ արդեն եղել է, ապա նա պետք է շարժվի ուղիղ դեպի առաջ, որից հետո դարձյալ ամեն անգամ շրջվի դեպի աջ:

**Աջ շրջադարձի սկզբունքը:** Օգտվել այս ցուցումից, եթե Ձեր կլաստերի համար նշված է **ուղղությունը աջ:** Այն դեպքում, երբ փողոցների անկյունները 90 աստիճան չեն կազմում, ապա հարցազրուցավարը պետք է ընտրի ամենից աջ գտնվող շրջադարձը, որ ինքը կարող է կատարել՝ առանց քայլերը կրկնելու: Նման օրինակներ են ներկայացված ներքևի գծապատկերում: Մեկնարկային կետերը նշված են խաչերով. հարցազրուցավարը կատարում է մի շարք աջ շրջադարձեր (նշված են հոծ սլաքներով) մինչև մեկնարկային կետ վերադառնալը, որից հետո կատարում է հնարավոր առավել աջ ընկած շրջադարձը (նշված է կետագծերով): Ընդ որում նշանակություն չունի՝ դա կլինի հարթ ասֆալտապատ փողոց, թե արահետ և այլն. եթե տեղացիները քայլում են այդ տեղերով, ուրեմն հարցազրուցավարը նույնպես պետք է քայլի նույն տեղերով:



**Ձախ շրջադարձի սկզբունքը:** Օգտվել այս ցուցումից, եթե Ձեր կլաստերի համար նշված է **ուղղությունը ձախ:** Այն դեպքում, երբ փողոցների անկյունները 90 աստիճան չեն կազմում, ապա հարցազրուցավարը պետք է ընտրի ամենից ձախ գտնվող շրջադարձը, որ ինքը կարող է կատարել՝ առանց քայլերը կրկնելու: (Նույն ցուցումներն են, ինչ վերևի օրինակում, սակայն բոլոր դեպքերում շարժվում ենք դեպի **ձախ**):

**Փակուղիներ:** Եթե ճանապարհը տանում է փակուղի, ապա հարցազրուցավարը շրջվում է դեպի ձախ և շարունակում է իր ընթացքը: Այնուհետև նա շարունակում է կատարել աջ շրջադարձեր: Փակուղի են համարվում այն բոլոր դեպքերը, երբ հարցազրուցավարը չի կարող քայլելով առաջ գնալ՝ շինարարական աշխատանքների կամ որևիցե այլ պատճառով: Փակուղիներ են համարվում նաև ընտրատեղամասի ակնհայտ սահմանները, ինչպես օրինակ՝ գյուղի ծայրամասը: Երբ հարցազրուցավարը տեսնում է, որ արդեն ընտրատեղամասի ծայրամասում է, ապա նա այդ ծայրամասը պետք է համարի փակուղի:




Վերոնշյալ օրինակում հարցազրուցավարը մեկնարկել է կարմիր գույնով նշված շենքից և աջ շրջադարձ կատարելով՝ առաջ է գնացել, մինչև հանդիպել է փակուղու (որը նշված է X նշանով): Նա շրջվել է դեպի

ձախ, որից հետո նորից շարունակել աջ շրջադարձերով առաջ գնալ՝ պահպանելով աջ շրջադարձերի պրակտիկան բոլոր դեպքերում, բացի փակուղիներից:

**Բազմաբնակարան շենքեր:**

- Հարցագրուցավարը դեմքով կանգնում է դեպի բազմաբնակարան շենքը և ընտրում աջ կողմում տեսանելի վերջին շքամուտքը:
- Հարցագրուցավարը բարձրանում է ամենավերին հարկը, կանգնում մեջքով դեպի աստիճանավանդակը և սկսում է հաշվել բնակարանները՝ սկսած աստիճանավանդակից աջ գտնվող առաջին բնակարանից:
- Հարցագրուցավարը ՊԵՏՔ է բազմաբնակարան շենքից դուրս գա նույն շքամուտքով, որով ներս է մտել: Նա պետք է դուրս գա նույն տեղը, որտեղից եկել է: Եթե պահանջված քանակի տնային տնտեսություններ դեռ չեն այցելվել, ապա հարցագրուցավարը կանգնում է մեջքով դեպի շենքը և ընտրում աջ կողմում գտնվող ամենամոտ շենքը: Եթե բազմաբնակարանային շենքն ունի մեկից ավելի մուտք (մինչև 5 մուտք), ապա պետք է հարցում անել և հաշվել տվյալ շենքի միայն աջ ծայրում գտնվող մուտքում: Եթե շենքում 6 կամ ավել մուտքեր են, ապա ամենաաջ մուտքը մտնելուց հաշվելուց և հարցում անելուց հետո պետք է դուրս գա, հաշվի 6 մուտք և մտնի վեցերորդ մուտքը և շարունակի ընտրանքը նույն սկզբունքով: Եթե շենքում կա 12 մուտք, ապա հարցագրուցավարը պետք է, նախ, դեմքով կանգնի դեպի շենքը, ընտրի ամենաաջակողմյան մուտքը և տնային տնտեսություններն ընտրի այդ մուտքից: Դրանից հետո հարցագրուցավարը պետք է դուրս գա մուտքից, դեմքով կանգնի դեպի շենքը և հաշվի աջակողմյան վեցերորդ մուտքը: Այդ մուտքում հարցագրուցյց անցկացնելուց հետո, նա պետք է հաշվի նախորդից աջ գտնվող հաջորդ վեցերորդ մուտքը: Այդպիսով, ընդհանուր առմամբ, հարցագրուցավարը կմտնի երեք մուտք:
- Եթե հարցագրուցավարը մտնում է շքամուտք և պարզում, որ տվյալ շքամուտքը տանում է դեպի նույն բնակարանները, որտեղ ինքն արդեն եղել է, ապա անշուշտ այդ բնակարանները պետք է բաց թողնել, որպեսզի նույն բնակարանները կրկնակի հաշվառման չենթարկվեն:
- Մեկ այլ բազմաբնակարան շենք կամ մեկ այլ շքամուտք մտնելը ՉԻ ՆՇԱՆԱԿՈՄ, թե նորից հաշվարկը պետք է սկսել 1-ից: Այն պետք է շարունակել:



**Իտալական բակեր:** Իտալական բակ մտնելիս հարցազրուցավարը մտնում է բակ, շրջվում դեպի աջ և սկսում հաշվառել բնակարանները:

**Մեկից ավելի տնային տնտեսությունների կողմից զբաղեցված անհատական բնակարաններ:** Որոշ դեպքերում մեկից ավելի տնային տնտեսություններ զբաղեցնում են միևնույն կացարանը: Այդպիսի օրինակներ են կոմունալ բնակարանները և այն կացարանները, որտեղ փախստականների մեկից ավելի ընտանիքներ ապրում են մեկ սենյակում՝ միմյանցից անջատվելով միջնորմների օգնությամբ: Եթե հարցազրույցի համար ընտրվել է մեկից ավելի տնային տնտեսությունների զբաղեցրած կացարանը, ապա հարցազրուցավարը կատարում է հետևյալ գործողությունները. հարցնում է տնային տնտեսություններից յուրաքանչյուրի ղեկավարի ծննդյան օրը և ստացած տեղեկությունները գրանցում Հարցազրուցավարի ձևաթղթի մեջ: Հարցազրույցի համար ընտրվում է այն տնային տնտեսությունը, որի ղեկավարի ծննդյան օրը ժամանակային առումով ավելի վերջերս է: Սա չի նշանակում, որ հենց տնային տնտեսության ղեկավարն է անպայման հարցազրույցի ենթարկվելու, այլ նշանակում է, որ հարցազրուցավարը տվյալ տնային տնտեսությունը պետք է համարի հարցազրույցի համար ընտրված տնային տնտեսություն: Ինչպես և որևէ այլ տնային տնտեսության դեպքում, նպատակային հարցվողին ընտրելու համար հարցազրուցավարը այս դեպքում նույնպես պետք է օգտագործի Քիշի աղյուսակի մեթոդաբանությունը:

**Զբնակեցված կացարաններ:** Մեր նպատակը այն կացարաններն են, որտեղ մարդիկ են ապրում, և պետք է բացառել չբնակեցված կացարանները, որտեղ մեզ համար նպատակային բնակչության խմբեր չկան: Հաշվառում անցկացնելիս հարցազրուցավարը պետք է բացառի ակնհայտորեն չբնակեցված կացարանները: Եթե ընտրված տնային տնտեսությունում դռան թակոցին չեն պատասխանում, հարցազրուցավարը պետք է խորհրդակցի հարևանների հետ և պարզի, թե արդյոք տվյալ բնակարանում բնակիչներ կան:

- Զբնակեցված բնակարանները կամ այն բնակարանները, որտեղ բնակիչները մնում են միայն շաբաթվա վերջին, ամռանը կամ արձակուրդների ժամանակ, պետք է համարել չբնակեցված: Նման դեպքում հարցազրուցավարը չի հաշվառում տվյալ կացարանը և անցնում է հաջորդին: Օրինակ, եթե քայլի չափն ընդունված է 7-ը, իսկ 7-րդ տունը բնակեցված չէ, ապա որպես հարցազրույցի համար նպատակային 7-րդ տնային տնտեսություն ընտրվում է հաջորդ տնային տնտեսությունը: Իսկ նշված չբնակեցված տնային տնտեսությունների վերաբերյալ համապատասխան նշում է արվում միայն վերատուգման նպատակով:
- Այն կացարանները, որոնց բնակիչները այդ պահին կամ տանը չեն, կամ ուղևորության մեջ են, կամ էլ գյուղում եղած իրենց մյուս բնակարանում են և այլն, պետք է համարվեն բնակեցված: Նման դեպքում հարցազրուցավարը Հարցազրուցավարի ձևաթղթում “1-ին այցի արդյունք” բաժնում նշում է 14- “Տնային տնտեսությունը ժամանակավորապես հասանելի չէ” և պետք է մեկ ուրիշ անգամ այցելի նույն բնակարանը: Օրինակ, եթե քայլի չափը 7-ն է, իսկ 7-րդ բնակարանի բնակիչները տանը չեն, ապա այդ տնային տնտեսությունը շարունակում է մնալ որպես 7-րդ տնային տնտեսություն: Պետք է կատարել այդ տնային տնտեսություն այցելելու երկրորդ, երրորդ փորձը, իսկ դրան հաջորդող տնային տնտեսությունը համարվում է թիվ 1-ը:

**Չպատասխանած:** Չպատասխանածի դեպքեր են համարվում բոլոր այն դեպքերը, երբ հարցազրույցի համար ընտրվում է որևիցե տնային տնտեսություն, բայց հարցազրույց տեղի չի ունենում: Այն դեպքում, երբ տ/տ-ն առաջին այցի ժամանակ կացարանը փակ էր կամ հարցվողը չներկայացավ ինչ-ինչ պատճառներով (բացառությամբ, երբ հարցվողը հրաժարվեց մասնակցել հարցմանը), Դուք կարող եք կատարել մինչև երեք այցելություն՝ նախքան չպատասխանած գրանցելը: Յուրաքանչյուր այսպիսի այցելության մասին պետք է համապատասխան նշումներ կատարել Հարցազրուցավարի ձևաթղթում: Չպատասխանածի դեպքերում հարցազրուցավարը որևէ փոփոխություն չի մտցնում քայլի չափի մեջ և հարցազրույցի համար լրացուցիչ տնային տնտեսություններ չի ընտրում:

**Ընտրատեղամասի սահմանները:** Եթե հարցազրուցավարը ակնհայտորեն հասնում է ընտրատեղամասի սահմանին, ապա նա այդ սահմանը պետք է համարի “փակուղի” և հետևի պատահական քայլի հրահանգներում փակուղիների վերաբերյալ տեղեկություններին:

**Տնային տնտեսությունների ընտրությունը գյուղական համայնքներում:** Գյուղերում պետք է կիրառել պատահական քայլի նույն սկզբունքն, ինչ քաղաքային համայնքներում: Քանի որ գյուղերում տները երբեմն համարներ չունեն, հարցազրուցավարը պետք է քայլի մեջ ներգրավի այն տները, որոնց գլխավոր մուտքը գտնվում է զրուցավարի ճանապարհի աջ կողմում: Այն տնային տնտեսությունները, որոնք գտնվում են բլուրների վրա և բավարարում են վերը նշված չափանիշին, նույնպես ներգրավվում են քայլի մեջ: Զրուցավարը պետք է ամեն շրջադարձից աջ գնա: Եթե աջ կողմում բնակավայր չկա, զրուցավարը պետք է օգտագործի փակուղու սկզբունքը. տեղափոխվի փողոցի մյուս կողմը և ետ վերադառնա՝ հաշվելով իրենից աջ գտնվող տնային տնտեսությունները և ամեն շրջադարձից աջ գնալով՝ մինչև չընտրի տնային

տնտեսությունների պահանջված քանակը: Խնդրում ենք նկատի ունեցեք, որ տրված քայլի չափով շարժվելիս պետք է հաշվել ամեն մի տնային տնտեսությունը և ոչ թե շենքը:

Եթե հարցազրուցավարը գյուղում հանդիպում է բազմաբնակարան շենքի, ապա նա պետք է կիրառի քաղաքային համայնքներում օգտագործված սկզբունքները, այսինքն մտնի դեմքով դեպի շենք կանգնած դիրքից ամենաաջը գտնվող մուտքից, գնա ամենավերին հարկը և հաշվի աջ կողմում գտնվող տնային տնտեսությունները:

**Կարևոր է հիշել: Եթե Ձեր կլաստեր համար նշված է ուղղությունը ձախ, ախա վերը նկարագրված բոլոր դեպքերում դուք շարժվում եք դեպի ՁԱԽ: Պարզապես փոխարինեք աջը ձախով:**